ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 24.10.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/36

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննելով «Երպետ» ՍՊԸ-ի կողմից 06.10.2017թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2017/36 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1.<u>«Երպետ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Երպետ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ուղղված 06.10.2017թ. բողոքով հայտնել է, որ «ԼՈՒՍԱՆՇԱՆ» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար լուսացույցների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԼՈՒՍ-ՀՄԱ-ԱՊՁԲ-17/1» մեկ անձից գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցելու նպատակով «Երպետ» ՍՊԸ-ն և «Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ-ն հայտ են ներկայացրել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

«ԼՈՒՍԱՆՇԱՆ» ՊՈԱԿ-ի կարիքների համար կազմակերպված Ընթացակարգին հայտ է ներկայացրել «Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ-ն, որի վճարման պահանջագրում նշված ընթացակարգի ծածկագիրը չի համապատասխանում Ընթացակարգի ծածկագրին՝ «ԼՈՒՍ-ՀՄԱ-ԱՊՁԲ-17/1» ծածկագրի փոխարեն նշված է «ԼՈՒՍ-ԳՀԱՊՁԲ-17/3»:

Ընկերությունը գտնում է, որ «Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը պետք է մերժվեր գնահատող հանձնաժողովի կողմից, քանի որ բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ուստի հրավերի պահանջներին անհամապատասխան հայտերը պետք է մերժվեն, քանի որ վճարման պահանջագրում արձանագրված անհամապատասխանությունները ենթակա չեն շտկման:

Ընկերությունը վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Ընկերությունը Խորհրդին խնդրել է կասեցնել «ԼՈՒՍ-ՀՄԱ-ԱՊՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգը, պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի կայացրած որևէ որոշման

իրականացումը, այդ թվում նաև՝ պայմանագրի կնքման գործընթացը, մինչև սույն բողոքի վերաբերյալ վերջնական որոշման իրականացումը, քանի որ պայմանագիր կնքելու արդյունքում բողոքը բավարարվելու պարագայում արհեստականորեն կդժվարանա Խորհրդի որոշման կայացումը:

«Երպետ» ՍՊԸ-ն բողոքով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է դադարեցնել (չեղյալ հայտարարել) «ԼՈՒՍԱՆՇԱՆ» ՊՈԱԿ-ի կարիքների համար լուսացույցների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԼՈՒՍ-ՀՄԱ-ԱՊՁԲ-17/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թիվ 2 և 3 արձանագրություններով «Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ-ի հայտը ընթացակարգի պայմաններին համապատասխան գնահատելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները:

«Երպետ» ՍՊԸ-ն ի լրումն բողոքի 18.10.2017թ. ներկայացրել է գրություն, որով հայտնել է, որ «ԼՈՒՍԱՆՇԱՆ» ՊՈԱԿ-ը խախտել է ՀՀ օրենսդրությամբ, այդ թվում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի պահանջները, քանի որ վճարման պահանջագիրը ենթակա է լրացման պատվիրատուի կողմից, մինչդեռ պատվիրատուն վճարման պահանջագրի մեջ նշել է ընթացակարգի սխալ ծածկագիր:

Ընկերությունը վկայակոչել է Օրենքի 28-րդ, 30-րդ, 46-րդ հոդվածները և ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել անվավեր ճանաչել «ԼՈՒՍԱՆՇԱՆ» ՊՈԱԿ-ի կարիքների համար լուսացույցների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԼՈՒՍ-ՀՄԱ-ԱՊՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի հրավերը և դրա հետևանքով կայացված որոշումները:

«Երպետ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 12.10.2017թ. ժամը 10:30-ի, 16.10.2017թ. ժամը 10:30-ի, 19.10.2017թ. ժամը 10:30-ի նիստերի վերաբերյալ, 12.10.2017թ. ժամը 10:30-ի և 19.10.2017թ. ժամը 10:30-ի նիստերին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով, իսկ այնուհետև նաև ի լրումն բողոքի գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

2. «ԼՈՒՍԱՆՇԱՆ» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.

«ԼՈՒՍԱՆՇԱՆ» ՊՈԱԿ-ը 09.10.2017թ. թիվ 0108 գրությամբ ներկայացրել է «ԼՈՒՍ-ՀՄԱ-ԱՊՁԲ-17/1» ծածկագրով գնման ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Միևնույն ժամանակ Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է, որ Ընթացակարգի հրավերով նախատեսված վճարման պահանջագրում գնման ընթացակարգի ծածկագիրը նախապես լրացվում է շահառուի կողմից, ուստի Պատվիրատուն գտնում է, որ «Էլիպս Ջի Էյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված վճարման պահանջագիրը չէր կարող հանձնաժողովի կողմից գնահատվել անբավարար և հայտը մերժվել, ինչպես և ցանկացած մասնակցի կողմից ներկայացված հայտ:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 12.10.2017թ. ժամը 10:30-ի, 16.10.2017թ. ժամը 10:30-ի և 19.10.2017թ. ժամը 10:30-ի նիստերի վերաբերյալ, 12.10.2017թ. ժամը 10:30-ի և 16.10.2017թ. ժամը 10:30-ի նիստերին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերը նշված գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ԳԲԽ-ԱՄ-2017/36 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2017/36 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «ԼՈՒՍԱՆՇԱՆ» ՊՈԱԿ-ի կողմից «ԼՈՒՍԱՆՇԱՆ» ՊՈԱԿ-ի կարիքների համար լուսացույցների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է ***«ԼՈՒՍ-ՀՄԱ-ԱՊՁԲ-17/1»*** ծածկագրով մեկ անձից գնում կատարելու ընթացակարգ, որի հայտերի բացման նիստը տեղի է ունեցել 28.09.2017թ. ժամը 12:00-ին:

2. Ընթացակարգի հրավերի հավելված 8՝ հայտի ապահովման վճարման պահանջագրի մեջ ***«15. Գնման ընթացակարգի ծածկագիրը» դաշտում նախապես լրացվել է «ԼՈՒՍ-ԳՀԱՊՁԲ-17/3» ծածկագիրը:***

3. «ԼՈՒՍԱՆՇԱՆ» ՊՈԱԿ-ի կողմից «ԼՈՒՍԱՆՇԱՆ» ՊՈԱԿ-ի կարիքների համար լուսացույցների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԼՈՒՍ-ՀՄԱ-ԱՊՁԲ-17/1» ծածկագրով մեկ անձից գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Երպետ» և «Էլլիպս Ջի Էյ» ՍՊ ընկերությունները:

4. «Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ-ի հայտի ապահովման վճարման պահանջագրի մեջ «15.Գնման ընթացակարգի ծածկագիրը» դաշտում մասնակցի կողմից լրացվել է ***«ԼՈՒՍ-ԳՀԱՊՁԲ-17/1»*** ծածկագիրը:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.09.2017թ.ժամը 12:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ «Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է հրավերի պայմաններին համապատասխան, իսկ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.09.2017թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած, իսկ այնուհետև նաև՝ ընտրված մասնակից, որին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ:

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով «Երպետ» ՍՊԸ-ի 06.10.2017թ. բողոքը, ի լրումն բողոքի 18.10.2017թ. գրությունը, «ԼՈՒՍԱՆՇԱՆ» ՊՈԱԿ-ի 09.10.2017թ. թիվ 0108 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝ նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու

պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ ***հրավերի պահանջներն, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

«ԼՈՒՍԱՆՇԱՆ» ՊՈԱԿ-ի կողմից «ԼՈՒՍԱՆՇԱՆ» ՊՈԱԿ-ի կարիքների համար լուսացույցների ձեռքբերման նպատակով կազմակերպել է «ԼՈՒՍ-ՀՄԱ-ԱՊՁԲ-17/1» ծածկագրով մեկ անձից գնում կատարելու ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերով նախատեսվել է հայտի ապահովման վճարման պահանջագրի հետևյալ օրինակելի ձևը.

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ[1] N**

(մասնակցության հայտի ապահովում)

2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝

4. Վճարողի բանկը՝

5. Վճարողի հաշվի համարը՝

6. Վճարողի ՀՎՀՀ՝

7. Վճարողի ՀԾՀ՝

8. Շահառու՝«ԼՈՒՍԱՆՇԱՆ»ՊՈԱԿ

9. Շահառուի ՀՎՀՀ՝02210395

10.Շահառուի բանկը՝ «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ

11.Շահառուի հաշվի համարը /հշ.N/ 1510011882920100

12. Գումարը թվերով և բառերով՝

13. Արժույթը (բառերով և կոդով)՝

14. Գործարքի /վճարման/ նպատակը՝ տուժանք (հայտի ապահովում)

15.Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ ԼՈՒՍ-ԳՀԱՊՁԲ-17/3

16.Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը

17. կից՝--- էջ

19.ա. Շահառուի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 19.բ. Կ.Տ.	18.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 18.բ. Կ.Տ.
Կատարված է շահառուի բանկի կողմից 20.ա. /_____/ /ստորագրություն/ 20.բ. Կ.Տ. "___" ___ 20___ թ.	Կատարված է վճարողի բանկի կողմից 21.ա. /_____/ /ստորագրություն/ 21.բ. Կ.Տ. 22.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

[1] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*

Ընթացակարգի հրավերի հայտի ապահովման վճարման պահանջագրի վերը նշված օրինակելի ձևի մեջ «15. Գնման ընթացակարգի ծածկագիրը» դաշտում Պատվիրատուի կողմից նախապես լրացվել է «ԼՈՒՍ-ԳՀԱՊՁԲ-17/3» ծածկագիրը, որը Խորհուրդն արձանագրում է, որ չի համապատասխանում ընթացակարգի «ԼՈՒՍ-ՀՄԱ-ԱՊՁԲ-17/1» ծածկագրին:

Միևնույն ժամանակ Ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած «Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման վճարման պահանջագրում «15. Գնման ընթացակարգի ծածկագիրը» դաշտում մասնակցի կողմից լրացվել է «ԼՈՒՍ-ԳՀԱՊՁԲ-17/1» ծածկագիրը, որը չի համապատասխանում հրավերով նախատեսված հայտի ապահովման վճարման պահանջագրի մեջ Պատվիրատուի կողմից նախապես լրացված ծածկագրին:

Այսպես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի մրցույթի ծածկագիրը:

Ընթացակարգի հրավերի հայտի ապահովման վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի 15-րդ կետի համաձայն՝ ***գնման ընթացակարգի ծածկագիրը պարտադիր դաշտում պարտադիր լրացվում է պահանջագրի ներկայացման համար հիմք հանդիսացող պայմանագրի համարը կամ գնման ընթացակարգի ծածկագիրը, որը նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով:***

Վերը նշված դրույթի համաձայն՝ վճարման պահանջագրի մեջ 15-րդ՝ գնման ընթացակարգի ծածկագիրը դաշտը լրացնելու պարտականությունը կրում է շահառուն՝ ի դեմս Պատվիրատուի, ընդ որում՝ նշված դաշտը նախապես է լրացվում պատվիրատուի կողմից և արդեն իսկ ամրագրված է հրապարակված հրավերի տեքստի մեջ: Այս տեսանկյունից անհրաժեշտ է նշել նաև, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վճարման պահանջագրի մեջ վերը նշված դաշտը լրացնելու պարտականությունը, այդ թվում նաև՝ իրավասությունը, համաձայն վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի, կրում է պատվիրատուն, ուստի նման պայմաններում մասնակիցը իրավասու չէ լրացնելու կամ փոփոխելու պատվիրատուի կողմից լրացման ենթակա և արդեն իսկ լրացված դաշտերը: Մինդեռ Խորհուրդն արձանագրում է, որ «Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման

վճարման պահանջագրի մեջ մասնակցի կողմից «15. Գնման ընթացակարգի ծածկագիրը» դաշտում, որն արդեն իսկ լրացված է եղել հրավերով, ***լրացվել է թե Ընթացակարգի համապատասխան ճիշտ ծածկագրից («ԼՈՒՍ-ՀՄԱ-ԱՊՁԲ-17/1») և թե հրավերի հայտի ապահովման վճարման պահանջագրի մեջ նշված ծածկագրից («ԼՈՒՍ-ԳՀԱՊՁԲ-17/3») տարբերվող ծածկագիր («ԼՈՒՍ-ԳՀԱՊՁԲ-17/1»):*** Նման պայմաններում Խորհուրդը գտնում է, որ «Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման վճարման պահանջագիրը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 8-րդ կետի 8.2 ենթակետը սահմանում է, որ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը սահմանում է, որ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Ընդ որում՝ նույն կարգի 41-րդ կետի համաձայն, եթե հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա մասնակցին չի տրվում հայտում առկա նշված անհամապատասխանությունները շտկելու հնարավորություն:

Ինչ վերաբերում է «Երպետ» ՍՊԸ-ի կողմից 18.10.2017թ. ի լրումն բողոքի ներկայացված գրությանը, ապա Խորհուրդը հայտնում է հետևյալը.

«Երպետ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 06.10.2017թ. ներկայացրած բողոքին ի լրումն 18.10.2017թ. գրությամբ խնդրել է անվավեր ճանաչել «ԼՈՒՍԱՆՇԱՆ» ՊՈԱԿ-ի կարիքների համար լուսացույցների ձեռքբերման նպատակով հայտարարված

«ԼՈՒՍ-ՀՄԱ-ԱՊՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի հրավերը և դրա հետևանքով կայացված որոշումները, քանի որ «ԼՈՒՍԱՆՇԱՆ» ՊՈԱԿ-ը սխալ է լրացրել Ընթացակարգի հրավերի հայտի ապահովման վճարման պահանջագրի «գնման ընթացակարգի ծածկագիրը» դաշտը:

Այսպես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր անձի՝ նախքան պայմանագրի կնքումը, բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների բողոքարկման խորհրդին: Միևնույն ժամանակ նույն օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ ***հրավերի պահանջներն, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:*** Այս տեսանկյունից անհրաժեշտ է նշել, որ «ԼՈՒՍ-ՀՄԱ-ԱՊՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի հայտերը բացվել են դեռևս 28.09.2017թ. ժամը 12:00-ին, իսկ Ընկերությունը բողոքը ներկայացրել է 06.10.2017թ., այսինքն հայտերը ներկայացնելու վերջնաժամկետի ավարտից հետո: Հետևաբար Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց հետո Ընկերության կողմից այլևս Օրենքի 50-րդ հոդվածով սահմանված կարգով չի կարող վիճարկվել Ընթացակարգի հրավերի պահանջները, ուստի սույն պահանջի մասով բողոքը ենթակա է մերժման:

Այսպիսով, Ընկերության կողմից «ԼՈՒՍ-ՀՄԱ-ԱՊՁԲ-17/1» ծածագրով ընթացակարգի հրավերի պահանջները վիճարկելու վերաբերյալ բողոքը ներկայացվել է Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց հետո, որպիսի պայմաններում Ընթացակարգի հրավերի պահանջները չեն կարող վիճարկվել Օրենքի 50-րդ հոդվածով սահմանված կարգով: Ինչ վերաբերում է «Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված վճարման պահանջագրի՝ հրավերի պահանջներին չհամապատասխանելու հանգամանքին, ապա Խորհուրդը գտնում է, որ «Երպետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը ենթակա է մասնակի բավարարման՝ սկզբնական բողոքով ներկայացված պահանջի մասով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Երպետ» ՍՊԸ-ի կողմից 06.10.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքը բավարարել մասնակի.

1. դադարեցնել «ԼՈՒՍԱՆՇԱՆ» ՊՈԱԿ-ի կարիքների համար լուսացույցների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԼՈՒՍ-ՀՄԱ-ԱՊՁԲ-17/1» ծածկագրով մեկ անձից գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.09.2017թ. թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշումը՝ «Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու մասով:

2. դադարեցնել «ԼՈՒՍ-ՀՄԱ-ԱՊՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին 29.09.2017թ. թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշումը:

3. «ԼՈՒՍԱՆՇԱՆ» ՊՈԱԿ-ի կարիքների համար լուսացույցների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԼՈՒՍ-ՀՄԱ-ԱՊՁԲ-17/1» ծածկագրով մեկ անձից գնում կատարելու ընթացակարգի հրավերն անվավեր ճանաչելու պահանջի մասով բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**